Կուրֆյուրստի հետ ունեցած մի խոսակցության մեջ նա առիթ է ունենում պատմելու հայերի ազատագրական իղձերի մասին, և նորա բարեհաճ վերաբերմունքից հետո, նոր յեռանդով հետամտություն սկսում 1678 թվի պատգամավորության նպատակին։ Դորա հետևանքն եր Որիի Հայաստան գալը կուրֆյուրստի հանձնարարական թղթերով Վրաց Գեորգի իշխանի, Եչմիածնի Յեղիազար և Գանձասարի կաթուղիկոսների և մելիքների անունով, վորոնցից մեր ձեռքն է հասել միայն առաջինը*։ Որին հենց սկզբից հաջողություն է գտնում, հավանորեն կուրֆյուրստի խոստովանահայր Պոտիեի (Pottier) աշխատությամբ, վոր Որիի բարեկամն եր և շահագրգռված Հայոց պապին ցույց տալիք հպատակության խնդրով. այդ ավելի պարզ յերևում է հետագայում։ Կուրֆյուրստի թղթերը ըստ եյության թելադրված են Որիի կողմից, բայց նորա յերկար բացակայության ժամանակ փոխված եյին հանգամանքները, վորին անտեղյակ եր նա. Գեորգի խանն արդեն հպատակվել եր շահին և Սպահան կանչվելով, պատվավոր բանտարկելության յենթարկվել 1698 թվին**. մեռել եր Յեղիազար կաթուղիկոսը, վոր ըստ մելիքների առ պապն ուղղած թղթի յուր կյանքի վերջին որերում ժողով եր ունեցել Եչմիածնում և վորոշել ընդունելու Հռոմա հպատակությունը՝ ոգնություն ստանալու համար, և նույն իսկ ճանապարհ ընկել Յեվրոպա գնալու, բայց վերադարձել եր Երզրումից տաճիկների ստիպմամբ***։

Որին Հայաստան է գալիս 1699 թվին, ապրիլ ամսին. նա տեսակցում է Նահապետ կաթուղիկոսի հետ, սակայն առանց ցանկալի հետևանքի, մերժում է ստանում նաև Գանձասարի կողմից, հատկապես պապին յենթարկվելու առաջարկության համար։ Որին ուրախությամբ է ընդունվում միայն Անգեղակոթում հավաքված 10 մելիքների կողմից, ուր ներկա յեր նաև Հակոբա վանքի վանահայր Մինաս վարդապետը։ Որիի ոգնականն ու նորա գործի շարունակողը ապագայում։ Ժողովը վորոշում է վոչ միայն պապին հպատակության թուղթ գրել, այլ և դժգոհություն հայտնել կաթուղիկոսների և հայ հոգևորականության դեմ. գործի հաջողության դեպքում խոստանում են պապական կաթուղիկոս նստեցնել Եչմիածնում։ Մի ուրիշ թուղթ մելիքները գրում են Իոհան Վիլհելմ կուրֆյուրստին, ուր հայտնում են նորա 1698 թվի ապրիլ 13-ի գրության ստացումը և Յեղիազարի մահը ութ տարի առաջ, Որիի տեսակցությունը Եչմիածնի և Գանձասարի կաթուղիկոսների հետ, առանց հայտնելու բուն գաղտնիքի եյությունը։ Այստեղ ևս մելիքները արծարծում են միության խնդիրը, դժգոհություն հայտնում կաթուղիկոսների մեծ ծախսերի համար, հիշում Եչմիածնի ժողովն ու պատգամավորության առաքումը, կաթուղիկոսի մահն ու պատգամավորների վերադարձը, Իսրայելի և Որիի մասնակցությունը, Պոռշյանց տոհմի նահատակությունը կրոնի համար և Որիի ընտրությունը վորպես ներկայացուցիչ։ Ապա իրենց յերախտագիտությունն են հայտնում, վոր պետք է ազատվեն անհավատների ձեռքից կուրֆյուրստի շնորհիվ. ամեն բան գրել չեն կարող թշնամիների յերկյուղից, տեղեկանալ կարող է նա Որիից և Մինաս վարդապետից։ Ապա համառոտ բացատրում են իրենց ազատագրության ծրագիրը, վորին գլուխ պիտի կանգներ կուրֆյուրստը, ստանալով Հայաստանի թագավորությունը։ Միջոցներ չեն պակասում նրանց, այլ առաջնորդ միայն, վոր կուրֆյուրստի յեղբայր Կարլ Ֆիլիպպը կլինի ժամանակավորապես, իսկ նա Հայաստան կգա, յերբ ամեն ինչ պատրաստ կլինի. յեղբոր համար կարելի է մի ուրիշ իշխանություն կազմել, վոր դաշնակից կդառնան ընդհանուր թշնամու դեմ*։

Նույն ժողովում մի ուրիշ թուղթ ել գրվում է Պետրոս մեծին. մելիքները ծանուցանում են իրենց նեղությունը պարսիկ լծի տակ, վոր «ոպի» պայմանական բառով են արտահայտում. պատմում են 1678 թվի ժողովի մասին, ինչպես նախընթաց թղթերում, յուր հետագա անց ու դարձով. Որիի բացակայության ժամանակ, վոչ վոքի չեն վստահացել ցարի մոտ ուղարկելու. այժմ Որիին ընտրում են իրենց ներկայացուցիչ, ինչպես և Մինաս վարդապետին, վորոնք ավելի մանրամասնություններ կպատմեն։ Խոստանում են յենթարկվել նրան՝ իրենց ազատագրությունից հետո։ Այստեղ այլ ևս խոսք չկա պապի հնազանդության կամ կուրֆյուրստի թագավորության մասին, իսկ քրիստոնյա թագավորի ձեռքով ազատվելու դերը հատկացրած է ռուսաց ցարին։ Հավանական չէ, վոր 1678 թվի ժողովում ռուսներին ևս դիմելու վորոշում յեղած լինի. սա նոր միտք եր, վոր կարող եր պետք գալ Յեվրոպայում գործը անհաջողության հանդիպելուց հետո, կամ յեթե հաջողությունը կապված լիներ ցարի բարեկամության հետ, վորի յերկրով պիտի անցներ Հայաստանին ոգնության գալիք զորքը։

Այն, ինչ վոր մելիքները միայն ակնարկով եյին հայտնել իրենց պատերազմական ծրագրի մասին, Որին մանրամասնությամբ մատուցանում է առանձին գրությամբ կուրֆյուրստին 1699 թ. սեպտ. 22-ին**։ Բանակի սաղմը կազմում է կուրֆյուրստի տրամադրած հեծելազորքը 2500 հոգուց բաղկացած, այլ և այլ տեսակի հրազենների համեմատ, վեց թնդանոթով (canon), չորսը վեց կալիբրի և յերկուսը տասնյերկու, մի ռմբաձիգ թնդանոթ (un mortier) հիսուն բոմբերով, հինգ հարյուր հրացան (mousquet) և ըստ այնմ վառոդ, հարյուր դրոշակ՝ մի կողմը խաչ և մյուս կողմը ս. Գրիգոր (Լուսավորիչ)։

Պապը, կայսրը, Թոսկանայի դուքսը ցույց են տալիս բարոյական և իրական աջակցություն, վորոնց

* Эзов. № 1.
** Զաքարիա. Բ. ԽԹ.։ Տես և Эзов. № 9, յեր. 40.
*** Эзов. № 2.

* Эзов. № 5.
** Անդ. № 9.